և քարոզ տալով, և ելեալ գնաց յՈւսկիւտարն։ Եւ եղին քաղաքիս առաջնորդ զՈհան վարդապետն մեծ։

Եւ օրս Անտոն Չէլէպուն հայրն մեռաւ և գնացաք կաթողիկոսիւն և վարդապետն ի վերայ նորա և բազում քահանայք եկեալ յեկեղեցեացն, և զգեստաւորեցան զպիրք զշապիկս և սարկաւագունք ևս սաղաւարտիւ և ուրարաւ և բուրվառով և աւետարանաւ (ԴՈՒՔ ՄԸ ԿԱՐՈՒՈՅ) կաթողիկոսն . . . խաչիւ և գաւազանաւ, լուցեալ մոմեղինօք և այսպիսի զ[ար]դուք և ուխտիւ մինչև ի դիրս գերեզման[աց] Ղալաթոյ, այնպէս գնացաք։ Այսօր տեսաք զփառ[ս] վայելչութեան եկեղեցոյ, զոր լինէր ի ժամանակս թագաւորաց։ Եւ յետ թաղմանն ելեալ եկաք ի տուն Չէլէպուն, հաց[կեր]ութ արարեալ հոգոյն և անտի ելեալ գնացաք . . . ։

Եւ ի Սեպտեմբերի օրս Թուխունճի Ովանէս վարդապետն եկեալ հնազանդելով կաթողիկոսին։ Քանզի նա եկն անցեալ տարիս, որ էր թիւն [Ռ]ՂԹ, և բազում անհամութիւն և անկարգութիւն արարեալ և բազում դրամս ժողովեալ ի քաղաքէս և պարծէր կաթողիկոսիւն թէ Աշակերտ եմ նորա. և քանի ի քաղաքս էր նայ և գնալոց էր, եհաս ի վերայ Եղիազար վարդապետն, և նա զայն լըւեալ փախեաւ ի քաղաքէս, զի մի չար արասցէ իւրն. և այն փախիլն էր, մինչև որ կաթողիկոսն եկաւ և ասաց թէ Նա սարկաւագ այլ չէ, և բանադրեաց։ Եւ ի ժամուս յայսմ եկն և բազում դրամս տվեալ կաթողիկոսին ճէրիմէ, և յետ աւուրց ուղարկեաց զնա նուիրակ ի գիւղքն։

Եւ յետ Զ աւուր պահոց սուրբ Գէորգայ Եշի աւրն (23 Սեպտ.) գնացաք ամենայն բարեկամաւ և սիրելեաւ